

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԹՄՐԱՍՈԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ (ՍՈՑԻԱԼ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Մուրադյան Յու. Հ., Մուրադյան Մ. Յու., Սամվելյան Ն. Ի.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան, muradyan.yurik@mail.ru,
maramuradyan@gmail.com, nerses.samvelyan.70@mail.ru

Մեր օրերում համընդհանուր կամ գլոբալ բնույթ են ստացել մարդկության բազմաթիվ, այդ թվում հանցագործությունների, ահաբեկչությունների և թմրամոլության հիմնախնդիրները: Արդիականության ամենասուր գլոբալ հիմնախնդիրներից մեկը շարունակում է մնալ ***հանցագործությունների հիմնախնդիրը***: Այս կամ այն չափով այն հատուկ է բոլոր երկրներին և այդ իմաստով համընդհանուր վտանգ է ներկայացնում բոլորի և յուրաքանչյուրի համար, հատկապես, եթե հաշվի առնենք վարչական, տնտեսական, քրեական և այլ հանցագործությունների հնարավոր

բազմազանությունը: Նաև այն պատճառով, որ աշխարհում գոյություն ունեն միջազգային հանցավոր խմբավորումներ՝ սինդիկատներ:

Բազմաթիվ պետությունների քրեական իրավունքով՝ առավել ծանր են *պետական հանցագործությունները*՝ հայրենիքի դավաճանությունը, լրտեսությունը, քաղաքական ահաբեկչությունը, դիվերսիան: Խիստ վտանգավոր են *անձի դեմ ուղղված հանցագործությունները*՝ սպանությունը, բռնաբարությունը, մարմնական վնասվածքները և այլն, քաղաքացիների *անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործությունները*՝ կողոպուտը, գողությունը, խարդախությունը, շորթումը, *պաշտոնական և տնտեսական հանցագործությունները և այլն:*

Մարդկությանը լրջորեն անհանգստացնում է *ահաբեկչության հիմնախնդիրը:* Ահաբեկչությունը (լատ.terror – վախ, սարսափ) քաղաքականություն է, որը մշտապես հիմնված է բռնության, ահաբեկման, սարսափի տարածման վրա: Ըստ ահաբեկչական գործունեության սուբյեկտի բնույթի՝ ահաբեկչությունը լինում է *չկազմակերպված կամ անհատական*, երբ ահաբեկչական ակտը կատարում է մեկ-երկու մարդ, որի հետևում կանգնած չէ որևէ *կազմակերպություն, և կազմակերպված, կոլեկտիվ*, երբ ահաբեկչությունը և պլանավորում և իրականացնում է որևէ կազմակերպություն: Կազմակերպված ահաբեկչությունն ամենատարածվածն է ամբողջ աշխարհում:

Ըստ նպատակի ահաբեկչությունը լինում է ազգայնական, կրոնական, գաղափարական, սոցիալական: Ահաբեկչությունները եղել են մարդկության ամբողջ պատմության ընթացքում: Գրականության մեջ բազում հիշատակություններ կան Հին աշխարհում, Միջին դարերում, Նոր և Նորագույն ժամանակներում տեղի ունեցած ահաբեկչությունների մասին: Հիշատակենք դրանցից մի քանիսը. 1963 թ. Դալասում սպանվեց ԱՄՆ-ի նախագահ Ջոն Բենեդիկտ, 1978 թ. մարտ ամսին Իտալիայի վարչապետ Ալդո Մորոյին առևանգեցին, իսկ մայիսին սպանեցին, 1981 թ. մայիսին թուրքական «գորշ գայլեր» ծայրահեղ աջ խմբավորման անդամ Ալի Աղջան մահափորձ կատարեց Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի դեմ՝ վիրավորելով նրան, իսկ 1995 թ. Բուդյոնովսկում (ՌԴ, Հյուսիսային Կովկաս) Բասսևի ահաբեկչության ակտին զոհ գնաց 200 մարդ: 2001 թ. սեպտեմբերին մահապարտները ինքնաթիռներով խոյահարեցին Նյու Յորքի Համաշխարհային առևտրի կենտրոնի 110 հարկանի երկու շենքերը՝ 3 հզ. զոհ: 2002 թ. հոկտեմբերին Ինդոնեզիայի Բալի կղզու գիշերային ակումբում տեղի ունեցած պայթյունից զոհվեց 202 և վիրավորվեց ավելի քան 300 մարդ: 2004 թ. մարտին Մադրիդի երկաթուղային կայարաններում տեղի ունեցած պայթյուններից զոհվեց 191 և վիրավորվեց 1500 մարդ: Միայն 1994-2007 թթ. ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Հնդկաստանում, Իսրայելում, Կոլումբիայում, Իրաքում, Ալժիրում, Պակիստանում, Ուզանդայում, Շրի Լանկայում ահաբեկչությունների զոհ է գնացել մոտ 20 հզ. մարդ (Barry Rubin, Judith Rubin, 2008):

Այսօր էլ Աֆղանստանում, Պակիստանում, Սիրիայում, Եմենում, աֆրիկյան, եվրոպական և մի շարք այլ երկրներում տեղի են ունենում բազմաթիվ ահաբեկչություններ: *Ահաբեկչությունը կարող է լինել ներքին և միջազգային:* Մեծ

չափով ահաբեկչությունը բնորոշ է մահմեդական արմատականությանը: Գործում են «Համաս», «Ալ Բաիդա» և այլ ահաբեկչական կազմակերպությունները: Հիմնավոր է այն տեսակետը, որ մեր օրերում միջազգային ահաբեկչության խնդիրը դարձել է գերակա գլոբալ հիմնախնդիրներից մեկը, իսկ *մահմեդական ահաբեկչությունն այսօր աշխարհում առավել տարածված և ամենավտանգավոր դրսևորվող ձևն է*: Նրա ծայրահեղ դրսևորումը ջիհադի՝ սրբազան պատերազմի հայտարարումն է (Степанова, 2007):

Որպես 2001 թ. սեպտեմբերին «Ալ Բաիդա» իսլամական ահաբեկչական կազմակերպության կողմից (ղեկավար, միջազգային թիվ 1 ահաբեկիչ Ուսամա Բեն Լադեն) Նյու Յորքի և Վաշինգտոնի վրա կազմակերպված ահաբեկչությունների հատուցման ակտ ԱՄՆ-ը Աֆղանստանի տարածքում իրականացրեց ոմբակոծություններ, որտեղ գտնվում էին «Ալ Բաիդայի» գրոհայինների գլխավոր բազաները:



Նկ. 1 2001 թ. ահաբեկչությունը Նյու Յորքում:

Հաճախ օգտագործվող «մահմեդական ահաբեկչություն» եզրույթը ոմանք քաղաքական առումով կոռեկտ չեն համարում, քանզի ենթադրվող կապ են տեսնում ահաբեկչության և այդ կրոնի միջև, որին մահմեդականների ճնշող մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում: Որոշ քաղաքագետների կարծիքով էլ այդ եզրույթը գիտական չէ և գոյություն չունի: Սակայն քաղաքագետների զգալի մասն այն կարծիքին է, որ մահմեդական ահաբեկչության էությունը, էվոլյուցիան, հակազդելու փորձը վկայում են, որ այն լուրջ մարտահրավեր ու սպառնալիք է ամբողջ աշխարհին (2):

Ժամանակակից մահմեդական ահաբեկչության կազմակերպիչները լայնորեն օգտագործում են կին-մահապարտներին, որոնց հաճախ անվանում են «կենդանի ռումբեր»: Սովորական կյանքում ովքեր են կին-մահապարտները: Դրանք արտամուսնական կապերի մեջ մեղադրվողներն են, ովքեր որպես միակ եղանակ ինքնասպանություն-ահաբեկչություն կատարելով խուսափում են իրենց հոր, եղբոր կամ ամուսնու կողմից հրապարակային և դաժան պատժի ենթարկվելուց՝ թույլ չտալով իրենց ընտանիքի համար հրապարակային ամոթ: Նման դեպքերում մահմեդական համայնքներում գտնում են, որ կինը «պատվավոր» մահը գերադասեց «ամոթալից»:

Աչքի տակ առած թեկնածուին բռնաբարելով՝ նրա համար բացառում են այդպիսի

ծրագիր իրականացնելուց հրաժարվելը (Юршина, 2011):

Ահաբեկչության հիմնախնդիրն ուսումնասիրող մասնագետներն առանձնացնում են ահաբեկչության դեմ պայքարի երկու հնարավոր ստրատեգիա՝ «առաջադիմական» և «պահպանողական»: *«Պահպանողական» ռազմավարություն* է համարվում ահաբեկիչների պահանջներին մասնակի զիջման գնալը, փրկագին վճարելը, տարածքային և բարոյական զիջումները (օրինակ՝ ընդունել արժեքները, ահաբեկիչների առաջնորդին ճանաչել որպես բանակցող կողմ և այլն): Այդպիսի դիրքորոշմանը մինչև վերջին ժամանակներս հետևում էին Ռուսաստանի Դաշնությունում:




Նկ. 2 2004 թ. ահաբեկչությունը Բեսլանում (Հս. Կովկաս):

«Առաջադիմական» ռազմավարություն նշանակում է անառարկելի ոչնչացնել ահաբեկիչներին, նրանց կողմնակիցներին և խրախուսող անձանց, հրաժարվել ահաբեկիչների հետ բանակցություններից, հրաժարվել հաշտության գնալուց:

ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) կարծիքով աշխարհի ահաբեկչական կազմակերպությունների մեծամասնությունը կապ ունի իսլամի հետ. ԿՀՎ տվյալներով՝ 2014 թ. միջազգային ահաբեկչական 80 կազմակերպություններից 72-ը ներկայացնում էին իսլամը (Մուրադյան Յու., Մուրադյան Մ., 2014):

Մեր օրերում համամոլորակային է դարձել *թմրամոլության հիմնախնդիրը*, որն ընդհանուրի կարծիքով իսկական համաճարակի բնույթ է ստացել: Բավական է ասել, որ թմրամիջոցների տարեկան շրջանառության ծավալն անցնում է 500 մլրդ դոլարից՝ ստվերային տնտեսության տեսակներից զիջելով միայն զենքի առևտրի այդ ցուցանիշին (Корсантия, Максименко, 2013): Թմրամոլությունը սերտորեն կապված է հանցագործությունների հետ. քանի որ շատ թմրամոլներ գնում են հանցագործության հենց նրա համար, որպեսզի բավարարեն թմրանյութերի իրենց պահանջարկը: Աշխարհում գոյություն ունեն թմրամիջոցների արտադրության երեք գլխավոր կենտրոններ՝ իրենց արտադրական և իրացման «մասնագիտացմամբ» և եկամուտների օրինականացման իրենց կենտրոններով: Ընդարձակ է թմրամիջոցների օգտագործման գլխավոր օջախների աշխարհագրությունը (գծ. 1):



Գծ. 1 Թմրամիջոցների համաշխարհային արտադրությունն ու վաճառքն ըստ Մ.Ա.Յարալովի

Կարելի է ավելացնել, որ թմրամոլությունը սերտորեն կապված է հանցագործությունների հետ. չէ որ շատ թմրամոլներ գնում են հանցագործության հենց նրա համար, որպեսզի բավարարեն թմրանյութերի իրենց պահանջարկը: Սոցիոլոգիայում ընդունված տեսակետի համաձայն՝ թմրամոլությունը շեղված վարքի դրսևորումներից է, իսկ նրա ծագման ու զարգացման պատճառներից մեկն ամենից հաճախ բնավորության առանձնահատկություններ են, հոգեկան և ֆիզիկական խանգարումները, սոցիալական տարբեր գործոնները: Ոչ հազվադեպ թմրամոլությունն առաջանում է այն հիվանդությունների շրջանում, որոնց բուժման նպատակով ստիպված են երկար ժամանակ օգտագործել թմրանյութեր: Բազմաթիվ դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են պաշտոնական բժշկության մեջ (քնաբերներ, թմրեցնող անալգետիկներ), կարող են առաջացնել թմրանյութերից կախվածության ծանր ձևեր: Որոշ երկրներում հոգեկան ակտիվությունն առաջացնող նյութերի օգտագործումը կապված է որոշակի կրոնական և մշակութային ավանդույթների հետ (ալկոհոլի օգտագործումը, հնդկացիների կողմից կոկայինի տերևներ ծամելը, նարգիլային ծխելը արևելյան երկրներում):

Թմրամոլների 60 %-ը կազմում են 16-30 տարեկան երիտասարդները, 20 %-ը՝ դպրոցականները: 2012 թ. ՌԴ-ում 14-18 տարեկան դեռահասների շրջանում սպիրտային խմիչքներ էր օգտագործում տղաների 88 %-ը և աղջիկների՝ 93 %-ը, թմրամիջոցներ, հոգեմետ պրեպարատներ՝ տղաների 56 %-ը և աղջիկների՝ 20 %-ը: ԱՄՆ-ում թմրամիջոցներ է օգտագործում դպրոցականների 25%-ը, ՌԴ-ում՝ 20 %-ը:

Աշխարհում 2013 թ. հաշվվում էին մոտ 250 մլն թմրամուլներ (Корсантия, Максименко, 2013): Օգտագործման ամենացածր ցուցանիշներ ունեն Մալթան, Բուլղարիան, Հունաստանը, Շվեդիան, և ամենաբարձր՝ Իտալիան, Իսպանիան, Չեխիան, Ֆրանսիան:

Գործնականում բոլոր երկրներում օրենսդրական ճանապարհով պայքար է մղվում հանցագործությունների, ահաբեկչության և թմրամուլության դեմ: Գործում են խիստ պատժամիջոցներ, սակայն դրանք դեռ ցանկալի արդյունք չեն տալիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մուրադյան Յուրիկ, Մուրադյան Մարիետա Մարդկության համամուրակային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,-Եր.; Տիգրան Մեծ հրատ.,2014. – 420 էջ:
2. Добаев И. П., Немчина В. И. Новый терроризм в мире и на Юге России: сущность, эволюция, опыт противодействия. – Ростов н/Дону: Ростиздат, 2005
3. Корсантия А.А., Максименко И.В. Основные причины детерминации преступности в Российской Федерации // журнал «Право и безопасность», № 2, июль, 2013.
4. Степанова Е.А., Исламистский терроризм сегодняшнего дня: глобальный и локально-региональный уровни // Индекс безопасности. -2007. № 1, .66-89.
5. Юршина М. Женщин, которых готовят в смертницы, специально насилуют // Gazeta ru 25.01. 2011.
6. Barry Rubin, Judith Rubin. Chronologies of modern terrorism. –М.Е.Sharpe, 2008.- 405 p.

PREVENTION, TERRORISM AND NARCOMANIA AS A GLOBAL PROBLEM

(socio-geographical analysis)

Muradyan Yu. H. Muradyan M. Yu. Samvelyan N. I.

In the article is discussed some actual and most global issues of humanity, which are characteristic for all countries without exception. Despite the adopted measures of crime, terrorism and drug addiction, as social problems, not only did not receive their solution, but they continue to expand and deepen their geography.